

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման գործում գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով 2012 և 2013 թվականների գարնանն ու աշնանը իրականացվել են Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին դիզելային վառելանյութի և ազոտական պարարտանյութի մատչելի գներով ձեռքբերման պետական աջակցության ծրագրեր:

2014 թվականին ծրագրերը նախատեսվում է շարունակել, միաժամանակ նախատեսվում է մատակարարել նաև ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր:

ՀՀ հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գնով դիզելային վառելանյութի, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում նախատեսվում է մատակարարել ներքոհիշյալ քանակները՝

1. Դիզելային վառելանյութ՝ 14325496 լիտր.

- (Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին և 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան)

2. Ազոտական պարարտանյութ՝ 33121,35 տոննա.

- ամոնիակային սելիտրա 34,4% ազոտի պարունակությամբ (ԳՈՍՏ 2-85),

3. Ֆոսֆորական պարարտանյութ՝ 2645,2 տոննա.

- կրկնակի սուպերֆոսֆատ 46% ֆոսֆորի պարունակությամբ (ԳՈՍՏ 16306-80),

4. Կալիումական պարարտանյութ՝ 1618,9 տոննա.

- կալիումական աղ 60% կալիումի պարունակությամբ (ԳՈՍՏ 4568-95):

Վերոգրյալ ծրագրերն իրականացնելու համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մրցակցային հիմունքներով կազմակերպում է ընտրություն դիզելային վառելանյութ և պարարտանյութեր ներկրող իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև:

Ծրագրերին մասնակցելու և նշված քանակները մատակարարելու ցանկության դեպքում անհրաժեշտ է մինչև 2014 թվականի փետրվարի 3-ը, ժամը՝ 18⁰⁰ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիզելային վառելանյութի, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի գնային առաջարկներ՝ համաձայն կից ներկայացվող ձևաչափերի:

Հետադարձ կապ՝ gnumner-agro@mail.ru հեռ. 095 52 36 83

**Գնի առաջարկ
դիզեյնային վառելանյութի մատակարարման համար**

Հայտատուի անվանումը (անունը)

առաջարկվում է պայմանագիրը կնքել հետևյալ գնով.

Չափա- բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափի միավոր	Ինքնարժեքի հաշվարկ			Առաջարկվող գինը	
			Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ-ն*	թվերով	տառերով
1		լիտր					
2							
ընդամենը							

* Եթե հայտատուն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ սյունակում:

Հայտատուի անունը, ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը

(ստորագրությունը)

Կ.Տ.

-----201 թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Գնի առաջարկ
պարարտանյութերի մատակարարման համար**

Հայտատուի անվանումը (անունը)

առաջարկվում է պայմանագիրը կնքել հետևյալ գնով.

Չափա- բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափի միավոր	Ինքնարժեքի հաշվարկ			Առաջարկվող գինը	
			Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ-ն*	թվերով	տառերով
1	Ամոնիակային սելիտրա 34.4 %						
2	Կրկնակի սուպերֆոսֆատ 46%						
3	Կալիումական աղ 60%						
4	Նշված պարարտա- նյութերի ամբողջ քա- նակի բեռնափոխա- դրում ՀՀ մարզեր, համայնքներ						
ընդամենը							

* Եթե հայտատուն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ սյունակում:

Հայտատուի անունը, ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը

(ստորագրությունը)

Կ.Տ.

-----201 թ.
(ամսաթիվը ամիսը)